



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36  
հեռ. (0264) 6-15-11

էլ. հասցե: info\_gavar@aarhus.am

N AA - 001

« 01 » Փետրվարի 2016թ

«ՍԵՎԱՆ ԱՊ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ  
Ժ/Պ պարոն Ա. Գնդոյանին

### Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գնդոյան

Ցանկանում ենք տեղեկացնել, որ Ձեր կողմից դեռևս պատասխան չի ուղարկվել մեր կազմակերպության կողմից Ձեր կառույցին հղված 30.10.2015թ. № AA-010 հարցմանը, ինչը ՀՀ օրենսդրության պահանջների խախտում է: Քանի որ մենք ակնկալում ենք բանակցային համագործակցություն, ուստի չէինք ցանկանա այդ հապաղումը (կամ՝ հարցմանը չպատասխանելը) բողոքարկել վերադատության կամ դատական կարգով, ինչպես սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի (189.7-րդ հոդվածը լրաց. 01.12.03 ՀՕ-47-Հ օրենք)՝ «189.7-րդ հոդված. Տեղեկություն տալու պարտականությունը չկատարելը Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոշարադրյալից՝ վերստին դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով հնարավորինս սեղմ ժամկետներում ստանալ մեր՝ թե՛ 30.10.2015թ. № AA-010 հարցման, թե՛ այս հարցման պատասխանները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գրությունը նորից կցվում է:

Կանխավ շնորհակալություն:

Գավառի Օրինու կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36  
հեռ. (0264) 6-15-11

էլ. հասցե: info\_gavar@aarhus.am

N AA - 010

« 30 » Հոկտեմբերի 2015թ

«ՄԵՎԱՆ ԱՊ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ  
Ժ/Պ պարոն Ա. Գնդոյանին

### Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գնդոյան

2013թ-ից «Էմի Ֆրուր» ՍՊԸ Սևանա լճի Շորժայի հատվածում՝ լճի մեջ, պիլոտային ծրագրով, կառուցել է ցանցավանդակային ձկնաբուծարան: Այն մեր իրականության մեջ առաջին փորձնական ծրագիրն է՝ բիզնես պլանը, որի դրական կամ բացասական ազդեցությունը լճի էկոհամակարգի վրա հստակեցված չէր: Հանրային քննարկումները այս հարցի շուրջ չեն տվել հստակ պատասխան կամ մասնագիտական գնահատական: Հանրային լսումների ընթացքում բիզնես պլանն իրականացնող կազմակերպության և «ՄԵՎԱՆ ԱՊ» ՊՈԱԿ-Ի ներկայացուցիչները հանրությանը հավաստիացրել են, որ ձկնաբուծարանի շահագործումից հետո՝ յուրաքանչյուր օր, լճում տեղադրված ժամանակակից չափիչ սարքավորումները կտան այդ հարցերի բոլոր պատասխանները, նաև նախագծի առաջին հասարակական լսումների օրը «ՄԵՎԱՆ ԱՊ»-ի կողմից հավաստիացվեց, որ անձամբ կհետևեն չափումների ընթացքին, և Սևանա լճին վնաս ներկայացնող նույնիսկ փոքր շեղումների դեպքում կդադարեցնեք տվյալ գործունեությունը:

Պիլոտային ծրագրին հատկացված ժամկետն ավարտվել է, սակայն ոչ միայն վերոնշյալ տվյալները չեն հանրայնացվել, այլև նշված ծրագրի իրականացման պայմանագրի ժամկետն է երկարացվել:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրինուսի համաձայնագրոր և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ Գավառի Օրինուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն ծրագրի իրականացման (ընթացքի և ավարտի) արդյունքում լճի վրա ազդեցության մասնագիտական գնահատականների մասին .

1. Տրամադրել ամբողջական վերլուծություն՝ ծրագրի իրականացման ազդեցությունը լճի էկոհամակարգի վրա, այն է՝ հիդրոկենսաբանական, հիդրոքիմիական, հիդրոմորֆոլոգիական, մոնիտորինգի արդյունքները, եթե այդպիսիք առկա են /ծրագրի իրականացման ընթացքում և ավարտին/,

2. Տրամադրել տեղեկատվություն, թե ինչ հիմքով է պայմանագիրը երկարաձգվել և ինչու է այդ ծրագիրը շարունակում գործունեությունը /տրամադրել երկարաձգված պայմանագրի պատճեն/

3. Ծրագրի իրագործման արդյունքում ինչքան մարնաձուկ է բուծվել, ինչ քանակություն է բաց թողնվել լիճ, որ գետերից, ինչ չափի,

4. Ինչ կեր է օգտագործվել, և դրա ազդեցությունը լճի վրա /տրամադրել հատակային տիդմի լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները և մասնագիտական եզրակացությունը/:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող՝



Լ. Ասոյան